ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ԿՈՉ Է ՀՂԵԼ ԻՍՐԱՅԵԼՅԱՆ ԵՎ ՊԱՂԵՍՏԻՆՅԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ

Ապրիլի 5-ին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ուղերձ-նամակներ է հղել Իսրայելի վարչապետ Արիել Շարոնին և Պաղեստինյան իշխանության առաջնորդ Յասեր Արաֆաթին՝ անհանգստություն հայտնելով տարածաշրջանում ստեղծված իրավիճակի համար:

Վեհափառ Հայրապետի գրություններում մասնավորաբար ասվում է.

«Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին և աշխարհասփյուռ մեր ժողովուրդը խաղաղասեր ողջ մարդկության հետ անհանգիստ է և մտահոգ Իսրայելա-Պաղեստինյան հակամարտության վերջին շրջանի աննախադեպ լարվածությամբ ու բախումներով, որ վտանգել է խաղաղությունն ու կայունությունը ողջ տարածաշրջանում՝ պատճառ դառնալով բազմահարյուր մարդկային զոհերի:

Վշտակցության զգացումով Մեր աղոթքն ենք բարձրացնում առ Աստված անմեղ զոհերի հոգիների համար և հայցում մխիթարություն զոհվածների հարազատներին:

Մեծապես անհանգստացած ենք, որ վերջին օրերին ռազմական գործողությունների շրջագծում են հայտնվել Բեթղեհեմի Սուրբ Ծննդյան սրբատեղիները, ուր զինյալ խմբավորումների ներկայությունը լուրջ սպառնալիք է ստեղծել համաքրիստոնեական այդ սրբավայրերի անվտանգությանը»:

Նկատի առնելով այն փաստը, որ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին, ի դեմս Երուսաղեմի հայոց Պատրիարքության, քրիստոնյա քույր Եկեղեցիների հետ դարեր ի վեր իր սպասավորությունն է բերում համաքրիստոնեական սրբավայրերում և սրբատեղիների պահպանության և հոգածության երաշխավորներից մեկն է, Ամենայն Հայոց Կաթողիկոսը կոչ է արել հակամարտող կողմերին՝ «գործադրել ամեն միջոց, որպեսզի Բեթղեհեմյան սրբատեղիները զերծ մնան պղծումներից ու ավերածություններից»:

Նորին Սրբությունն իր աղոթքն է բարձրացրել առ Բարձրյալն Աստված, որպեսզի Տերը «ամենառատ ողորմությամբ ապահով ու անխոռով պահի Սուրբ Երկիրը, Իսրայելի և Պաղեստինի ժողովուրդներին՝ խաղաղության ու հաշտության Իր հովանին տարածելով տարածաշրջանի բոլոր երկրների վրա»: